

17 Եւ եկին հասին նոքա մեծապարծ երեւելի հոգեւորազգեաց փառաւք ի Յայաստան երկիրն. եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչեւ ի լեռն, որ անուանեալ կոչի Առեւծ: 18 Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք արհնութեամբ ողջունին, անդուստ յաշխարհն դարձան: 19 Եւ նստաւ սուրբն Ներսէս յաթոռ հայրապետութեան. ի հովուութեանն նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին: 20 Չի ի վարս կարգաց գնացից իւրոց՝ նմանեաց իւրոյ հաւրն մեծին Գրիգորի, արդարեւ հայրաբարոյ գտանէր ամենաբարի. զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն գործ երեւեալ անվնաս պահելոյ յաներեւոյթ թշնամեացն եւ յայտնեացն:

21 Սա եւ առաւել եւս առաջին ծառոցն նմանեալ, որ զնոյնազգեաց զնոյնահաս պտուղս վարդապետութեան բերեալ սկսեալ վերակացութեանն հովուութեանն, անկարաւտ մատակարարէր զաւգտակարսն, զհոգեւոր արաւտսն ջամբելով: 22 Չի շնորհքն այնպէս հանգեան ի նմա, զի մեծամեծ նշանս եւ բժշկութիւնս առնէր հիւանդաց, ուր դէպ լինէր. զմուրրութիւնս դարձուցանէր: 23 Առնէր եւ զայսպիսի սքանչելիսս. զորս կարի յամառեալ տեսանէր, ահ արկանելով հաւանեցուցանէր. իսկ հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, զնոսա բանիւք քարոզութեանն ածէր ի հաւանութիւն:

24 Շինէր եւ զաւերեալ եկեղեցիսս, եւ կանկներ զսեղանս կործանեալս. եւ հաստատէր ի կատարումն ապաշխարութեան զթերահաւատս, զի հաւատացեալք յԱստուած՝ ապրել կարասցեն: 25 Մխիթարէր զհաւատացեալս յաւիտենական յուսով բարութեամբն մշտնջենաւոր պարգեւացն¹. զթաղեական աթոռն միւսանգամ ելից, եւ իւրոց հարցն նմանեալ որդի եղեւ: 26 Եւ չարախաւսացն ընդդիմացեալ ըմբերանէր. իսափանէր եւ զանաւրէնութիւնս եւ զխաւսս եւ զգործս զայսպիսեացն միանգամայն: 27 Եւ վասն ճշմարտութեանն մինչեւ ի մահ մարտնչէր. եւ զաջողակ արդարութեանն քաջալերեալ ինդացուցանէր. եւ իւրով վարդապետութեանն անձրեւան պարարէր սնուցանել զչայեկան արդարութիւնսն արհնութիւնսընգալու²: 28 Եւ ընդ ամենայն տեղիս սահմանացն Յայոց մեծաց, ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զքարոզութիւն բանին կենաց, զնոյն եւ սա ոռոգեաց անձրեւովն. զբոյսս աճեցոյց մշակն հնձող, եղեալ գործակից սերմանողաց. եւ բազմացոյց գյորդաբուխ արդիւնսն ի շտեմարանս արքայութեանն, կարգացն առաջին հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով:

29 Նա եւ բազում զարութիւնս անպատումս յանձին իւրում բարձեալ բերէր. նա եւ կարի իսկ զողորմածութեան կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ, նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, եւ ապա այլոց արիւնակ բարեաց

1 *Օրինակ մի՝* յուսով բարութեանն, մշտնջենաւոր բարութեանցն եւ պարգեւացն

2 *Օրինակ մի՝* զօրհնութիւնս ընկալաւ